

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ
ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՄԻՈՒՄԻ ԶԱՆՔԵՐԸ 1915 Թ.
ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Բանալի բառեր – Յոհաննես Լեփսիուս, Շավարշ Միսակյան, Վանգենհայմ, Յիմերման, ՀՅԳ, «Հայաստան» թերթ, կառավարություն, նախարարություն, դեսպան, աղետ, քաղաքականություն

1915 թ. գարնանը Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը հյուպատոսական զեկույցների, դեսպանատան իր աշխատակիցների, Զավեն պատրիարքի, Լիպարիտ Նազարյանցի, ինչպես նաև դր. Լեփսիուսի հայոցնության կայանների միջոցով բազմիցս իրագեկվել էր Թուրքիայում հայերի սպառնալի վիճակի մասին: Չհերքելով իրեն ներկայացված տեղեկությունների իսկությունը՝ դեսպանը գործնականում որևէ քայլ չէր ձեռնարկում հայերին օգնելու համար, այլ փորձում էր իր գործողություններով դժգոհություն չառաջացնել երիտթուրքական կառավարությունում: «Ղեկավար շրջաններում (նկատի ունի Թուրքիայի – Մ. Հ.) ներկայումս հայերի հանդեպ գոյություն ունեցող անբարենպաստ տրամադրությունը,– նշում էր նա 1915 թ. ապրիլի կեսերին,– արգելում է մեզ հայերի օգտին միջամտություն կատարել և պահանջում է մեզնից լրացուցիչ զգուշություն: Այլապես ռիսկի դիմելով և աջակցելով թերևս հեռանկար չունեցող հարցին՝ մենք վտանգի կենթարկենք մեր հետագա ավելի կարևոր շահերը»¹:

Հատկանշական է, որ Վանում հայերի, այսպես կոչված, «ապստամբությունից»² հետո Վանգենհայմը լիովին հակահայկական դիրք գրավեց և

¹ St' u Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an den Reichskanzler (Bethmann Hollweg) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-04-15-DE-002, PA-AA, R 14085](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-04-15-DE-002, PA-AA, R 14085):

² Թուրքական պաշտոնական լրատվամիջոցները ողողված էին Վանում հայերի ապստամբության, այնտեղ հայերի և ռուսների անկարգությունների և 150.000 (Բեռլինում թուրքական դեսպանությունը, այդ թիվը ուռճացնելով, նշում էր 180.000) մուսուլմանների սպանության մասին ստահող տեղեկություններով, որոնք Կ. Պոլսի «Wolffs Telegraphisches Bureau» (W.T.B) լրատվական գործակալության միջոցով տարածվեցին գերմանական մամուլում՝ հաճախ «ինչպես ապացուցված է» պիտակով: Նման միջոցներով թուրքական պաշտոնական լրատվությունը փորձում էր նպաստել Գերմանիայում հայերի մասին հասարակական սխալ կարծիքի ձևավորմանը: St' u Hayruni A. und Hosfeld R., Johannes Lepsius und die Armenische Frage im Beziehungsgeflecht des Weltkrieges // Hosfeld R. und Pschichholz Ch. (Hg.), Das Deutsche Reich und der Völkermord an den Armeniern, Göttingen, 2017, S. 232:

մայիսի 31-ին Արտաքին գործերի նախարարությանն ուղղված հեռագրում իր համաձայնությունն էր տալիս «ոչ լոյալ հայերի»¹ դեմ էնվեր փաշայի նախատեսած գործողություններին: Այդ հեռագրում նա հաղորդում էր հետևյալը. «Հայկական լրտեսության առաջն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունները կանխելու նպատակով ռազմական նախարար էնվեր փաշան նպատակադրվել է, պատերազմական դրությունն օգտագործելով, հայկական դպրոցների մի զգալի մասը փակել, հայերի փոստային հաղորդակցությունն ընդհատել, հայկական թերթերը փակել և այժմ ապստամբած բոլոր ոչ միանշանակ անմեղ ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետքում: Նա թախանձագին խնդրում է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Թուրքերի այդ միջոցառումները, իհարկե, մեզ թշնամի ամբողջ աշխարհում դարձյալ մեծ հուզումների տեղիք կտան ու նաև կշահարկվեն մեր դեմ: Միջոցառումները, անշուշտ, նաև մեծ խստություն են հայ ազգաբնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք իրավունք ունենք դրանք իրենց ձևի մեջ մեղմել, բայց ոչ հիմնովին արգելել: Ռուսաստանից սնվող սադրանքները մեծ չափերի են հասել՝ սպառնալով Թուրքիայի գոյությանը: Խնդրում եմ՝ դր. Լեփսիուսին և գերմանա-հայկական կոմիտեներին համապատասխանաբար հայտնեք, որ Թուրքիայի քաղաքական և ռազմական իրավիճակում ցավոք նշված միջոցառումներից խուսափել հնարավոր չէ: Այդ մասին ես գաղտնի տեղյակ եմ պահել նաև Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի, Բաղդադի հյուպատոսություններին»²:

Այդ հեռագիրը Կ. Պոլսում գերմանական դեսպանությունից ստացված պաշտոնական առաջին հաղորդումն էր արևմտահայության տեղահանման ու արքայի վերաբերյալ, թեև այն չէր ներկայացնում իրադարձությունների ստույգ պատկերը, և դրա միջոցով սարսափելի իրականության մասին կարելի էր միայն կռահումներ անել³:

1915 թ. հունիսի սկզբին Արտաքին գործերի նախարարությունում Արևելքի գործերով զեկուցող Ռոզենբերգը դր. Լեփսիուսին հանձնեց այդ հեռագրի պատճենը⁴: Ծանոթանալով դրա բովանդակությանը՝ վերջինս նկատեց, որ ըստ երևույթին դեսպանին պարզ չէր էնվեր փաշայի որոշման նշանակությունը: «Զանգվածային ապստամբությունները կանխելու նպատակով,– պարզաբանում էր Լեփսիուսը,– արքային են ոչ թե «ընտանիքների», որոնք միանշանակ «անմեղ չեն», այլ զանգվածների: Իսկ զանգվածների

¹ St' u Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an den Reichskanzler (Bethmann Hollweg) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-05-DE-001 PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-05-DE-001 PA-AA, R 14086):

² Lepsius J., Deutschland und Armenien, Potsdam, 1919, S. 79.

³ St' u Hayruni A., Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 2 // Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 159, Jg. 2013/ Heft 2, S. 42.

⁴ St' u Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Potsdam, 1927, S. V.

աքսորումը նշանակում է զանգվածային կոտորածներ: Այդ գիտի ամեն ոք, ով ծանոթ է Թուրքիայի ներքին պայմաններին, որոնց քողի տակ տեղի են ունենում նման աքսորումները»¹:

Այսպիսով, Լեփսիուսը փորձում էր Էնվերի որոշման էությունը պարզաբանելու միջոցով Արտաքին գործերի նախարարությանը դրդել ազդելու թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս դադարեցներ իր բարբարոսական քաղաքականությունը, բայց ապարդյուն:

Ուշագրավ է, որ գերմանական դեսպանությունից ստացված հիշյալ հեռագիրը Լեփսիուսի համար միակ սկզբնաղբյուրը չէր Թուրքիայում հայերի ողբերգական վիճակի մասին պատկերացում կազմելու համար: Դեռևս 1915 թ. ապրիլին՝ Կ. Պոլսում հայ մտավորականության զանգվածային ձերբակալությունների ու աքսորի ժամանակ, Շավարշ Միսակյան անունով մի հայ երիտասարդ այնտեղ ստեղծել էր գաղտնի խմբակ, որն իր առջև խնդիր էր դրել մի կողմից աջակցել ձերբակալված մտավորականների ընտանիքներին, մյուս կողմից՝ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին հնարավորինս արագ իրազեկվել և ձեռք բերած տեղեկությունները գաղտնի ճանապարհներով փոխանցել Մոֆիայում ՀՅԴ-ի Կենտրոնական կոմիտեին, «Հայաստան» թերթի խմբագրությանը, ինչպես նաև տեղի դիվանագիտական ներկայացուցչություններին²: Այդ տեղեկությունները Լիպարիտ Նազարյանցի միջոցով հասանելի էին դառնում նաև դր. Լեփսիուսին:

Չնայած դրան՝ արևմտահայության վերաբերյալ դեսպանի վերոնշյալ մտահոգիչ տեղեկությունից հետո Լեփսիուսը որոշեց անձամբ մեկնել աղետի վայրը՝ տեղում իրադարձություններին իրազեկ դառնալու և դրանով իսկ հավաճվող հայերի մասին գերմանական կառավարությանն ուղղված դիմումներն արդյունավետ դարձնելու համար³: Այդ նպատակով նա դիմեց Արտաքին գործերի նախարարությանը՝ Բ. Դոնից Կ. Պոլիս և Թուրքիայի հայաբնակ գավառներն ուղևորվելու թույլատվություն ձեռք բերելու խնդրանքով⁴: Իր ճանապարհորդությունը Լեփսիուսը հիմնավորում էր հայերի առաջնորդներին թուրքական կառավարության հանդեպ չեզոք դիրք գրավելու անհրաժեշտությունը պարզաբանելու և նրանց կողմնորոշելու պատրվակով⁵: Գեր-

¹ Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. V:

² Hayruni A., Johannes Lepsius' armenische Verbindungen // Hofseld R. (Hg.), Johannes Lepsius- Eine deutsche Ausnahme, Der Völkermord an den Armeniern, Humanismus und Menschenrechte, Göttingen, 2013, S. 219.

³ «Լեփսիուսի նախաձեռնությունը,– մի առիթով ասել է Մարգրետ Անդերսոնը,– անելալի իրավիճակում չափազանց խիզախ քայլ էր»: Տե՛ս Hofseld R., Johannes Lepsius, Armenien und die christliche Ethik // Schaede S., Hofseld R. (Hg.), Der Genozid an den Armeniern. Interdisziplinäre Perspektiven auf die historische und aktuelle Rolle des Protestantismus, Jena, 2016, S. 26:

⁴ Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. V-VI:

⁵ Տե՛ս Der Unterstaatssekretär des Auswärtigen Amtes (Zimmermann) an den Botschafter in Konstantinopel (Wangenheim) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086):

մանիայի պետքարտուղարի տեղակալ Արթուր Յիմերմանը, որը դեռ կրկնում էր 1914 թ. նոյեմբերին Գերմանա-հայկական ընկերությանը (այսուհետև՝ ԳՀԸ) տված խոստումը՝ պատերազմի ավարտից հետո ընդմիջված հայկական բարեփոխումները իրագործելու վերաբերյալ¹, ընդառաջ գնաց Լեփսիուսի ցանկությանը և հունիսի 6-ին Վանգենհայմին ուղարկեց մի հեռագիր, որտեղ դեսպանին հրահանգում էր Բ. Դոնից թույլատվություն ստանալ նրա ուղևորության համար²:

Լեփսիուսի նախաձեռնության առնչությամբ Բ. Դոն և դեսպանի դիրքորոշումը, սակայն, չափազանց հստակ և միանշանակ էր: «Նկատի առնելով Բ. Դոնի՝ արդեն ի կատար ածվող միջոցառումը,՝ տեղեկացնում էր դեսպանին իր՝ հունիսի 9-ի պատասխան հեռագրում,՝ որը ստուգապես հաստատված զանազան փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, և նրա ջանքերն արդյունք չեն ունենա: Դրանից զատ՝ ես այդ այցն այն նկատառումով եմ համարում ոչ տեղին, որովհետև դր. Լիպարիտի գործունեությունը ևս դեռ չի պարզաբանվել, և որ այն (Լեփսիուսի ուղևորությունը – Ա. Հ.) կարող է Բ. Դոնը վրդովել, որը, ինչպես և ցույց է տալիս նախօրոք արված հավաստի ստուգումը, միանգամայն դեմ է այդ այցելությանը: Բացի այդ՝ ես իմ ուժերի ներածին չափով անում եմ ամեն բան, որպեսզի մեղմեմ Բ. Դոնի չափազանց խիստ ձեռնարկները»^{3*}:

Կ. Պոլսից ստացված բացասական պատասխանը չհուսահատեցրեց դր. Լեփսիուսին: Նա համառորեն շարունակեց գործնական քայլեր ձեռնարկել իր ուղևորությունը հնարավոր դարձնելու համար: Այսպես՝ նրա նախաձեռնությամբ հունիսի 11-ին միաժամանակ երկու գրություն ուղարկվեց դեսպան Վանգենհայմին: Առաջինը՝ իր անունից, որտեղ նա Կ. Պոլիս ուղևորվելու իր որոշումը հիմնավորում էր Գերմանիայի և Թուրքիայի շահերին օգտակար լինելու ցանկությամբ: Նա վստահեցնում էր, որ եթե իրենց հաջողվեր նպաստել հայերի առաջնորդների և Բ. Դոնի միջև բնականոն փոխհարաբերությունների պահպանմանն ու ամրապնդմանը, ապա թուրքական կառավարության կողմից հայերի դեմ իրականացվող խիստ միջոցառումները, որոնք ինքը դեսպանին չհակադրվելու դիտավորությամբ պայմանավոր-

¹ Տե՛ս **Hayruni A. und Hoffeld R.**, նշվ. աշխ., էջ 228:

² Տե՛ս Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an den Botschafter in Konstantinopel (Wangenheim) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-06-DE-001,PA-AA,R14086):

³ Տե՛ս Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-09-DE-001,PA-AA,R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-09-DE-001,PA-AA,R14086):

* Բ. Դոնի խիստ միջոցառումները կանխելու վերաբերյալ դեսպանի վերջին վստահեցումը բացահայտ սուտ էր, քանի որ նա ոչ այդ ժամանակ, ոչ էլ առավել ևս հետագայում գործնական որևէ քայլ չձեռնարկեց ընդդեմ թուրքական կառավարության հայաջինջ քաղաքակալության: Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 2, S. 43:

ված էր համարում «լրտեսության առաջն առնելու և տեղական անկարգությունները կանխելու անհրաժեշտությամբ», հայերի կողմից կղիտվեին ոչ կանոնավոր, իսկ իր այցը կնպաստեր Թուրքիայում Գերմանիայի հետապնդած շահերին: Ընդ որում, այդ գրության մեջ Լեփսիուսն ընդգծում էր դեսպանի կողմից հայերի օգտին ակտիվ միջամտություն կատարելու քաղաքական անհրաժեշտությունը՝ պայմանավորելով դա Թուրքիայի շահերով: Նրա կարծիքով՝ այս ճանապարհով միայն Թուրքիան կարող էր շահել ինչպես իր քրիստոնյա հպատակների վստահությունը, այնպես էլ կովկասահայերի համակրանքը¹:

Դեսպանին ուղղված մյուս գրությունը Լեփսիուսի երկու կազմակերպությունների՝ Գերմանիայի առաքելությունը Արևելքում (այսուհետև՝ ԳԱԱ) և ԳՀԸ-ի անունից էր, որտեղ նրան կոչ էր արվում «աշխատանքներ տանել Թուրքիայում քառասյին վիճակի մեջ հայտնված քրիստոնյաների դրության բարելավման ուղղությամբ»: Իսկ Հայոց պատրիարքության և հայերի առաջնորդների հետ իրենց հարաբերություններն անխաթար պահելու և նրանց կողմնորոշելու համար առաջարկվում էր հնարավոր դարձնել դր. Լեփսիուսի ուղևորությունը Կ. Պոլիս²:

Ցավոք, այս անգամ ևս Լեփսիուսի ջանքերը, ինչպես նշում է Էվալդ Շթիրը, «արդյունք չտվեցին, քանի որ թուրքական կառավարությունը հրաժարվեց նրան հասկացնել ուղևորության թույլատվությունը»³: Այդ պատճառով Ցիմերմանը, որը նախապես իր հավանությունն էր տվել Կ. Պոլսի դեսպանին գրություն ուղարկելու Լեփսիուսի որոշմանը⁴, վերջինիս դիմումի համաձայն՝ հունիսի 13-ին իր կողմից երկրորդ հեռագիրը ուղարկեց Վանգենհայմին, որտեղ նշվում էր. «Էր. Լեփսիուսը Բ. Դռան համար խնդիրներ ստեղծելու մտադրություն չունի: Նա կարծում է, որ իր ներկայությունը Կ. Պոլսում եթե անգամ գործնականում հաջողություն չունենա, բայց կմեղմի Գերմանիայում հայ ժողովրդի բարեկամների անհանգստությունը, իսկ հայերի համար կլինի ապացույց այն բանի, որ Գերմանիան մտադիր չէ իրենց շահը ստորադասել քաղաքական իրավիճակին: Ցավալի կլինի, եթե Թուրքիայի հետ մեր դաշինքի նկատմամբ ժողովրդի մեջ առկա համակրական վերաբերմունքը Հայկական հարցի պատճառով վերածվի հակակրանքի: Հետևաբար ինչպես սեփական, այնպես էլ Թուրքիայի շահերից ելնելով՝ մենք պետք է ջանանք չկորցնել հայերի վստահությունը:

¹ Stier u. Johannes Lepsius an den Legationsrat im Auswärtigen Amt Rosenberg // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AIIIDocs/1915-06-17-DE-001, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AIIIDocs/1915-06-17-DE-001, PA-AA, R 14086):

² Stier u. նույն տեղում:

³ Stier E., Zur Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft (1914-1939) // Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Nr. 5-6, Dezember 1939, S. 4 (68)-5 (69).

⁴ Stier u. Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. VI:

Ուրեմն ողջունելի կլինի, եթե Ձերդ գերագանցությանը հաջողվի հաղթահարել Բ. Դոան հակառակությունը դր. Լեփսիուսի ուղևորության վերաբերյալ: Ձենթլմենի նրա կերպարն արդեն իսկ երաշխիք է այն բանի, որ ինքը Կ. Պոլսում ոչինչ չի ձեռնարկի առանց Ձերդ գերագանցության և թուրք պաշտոնյաների համաձայնության: Ինչ վերաբերում է Սոֆիայում դր. Լիպարիտի գործունեության հանդեպ անվստահությանը, ապա այն, համաձայն դր. Լեփսիուսի այստեղ տված պարզաբանումների, թվում է անհիմն»¹:

Այդուհանդերձ, քանի որ Լեփսիուսը մտադիր չէր ձեռնունայն սպասել, մինչև մեկնման թույլատվությունը կհատկացվեր², նա հունիսի 18-ին և 22-ին Գերմանիայի ԱԳՆ-ին ներկայացրեց Թուրքիայում հայերի վիճակի վերաբերյալ երկու տեղեկագիր, որոնք շարադրել էր գլխավորապես Շ. Միսակյանի՝ Լ. Նազարյանցին հաղորդած տեղեկությունների հիման վրա³:

Հունիսի 18-ի տեղեկագրում Լեփսիուսը հաղորդում էր Կ. Պոլսում քսան հնչակյանների կախաղան բարձրացնելու մասին և համոզմունք հայտնում, որ նույնը սպասվում էր ձերբակալված և Անկարա ուղարկված դաշնակցական գործիչներին, որոնց թվում էին ՀՅԴ-ի պարագլուխներից Ակնունին, Խաժակը, Ջարդարյանը և Մինասյանը: Նա տեղեկացնում էր նաև Երզնկայի, Մարաշի, Հաճնի, Այնթափի և Կիլիկիայի հայերի բռնի տեղահանության ու Միջագետք քշվելու մասին⁴:

¹ Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an den Botschafter in Konstantinopel (Wangenheim) // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-13-DE-001, PA-AA/R14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-13-DE-001, PA-AA/R14086).

² Տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 251:

³ Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius' armenische Verbindungen, S. 219:

⁴ Տե՛ս **Lepsius J.**, Deutschland und Armenien, S. 85:

* Շ. Միսակյանից ստացած տեղեկությունների հիման վրա Լ. Նազարյանցը հունիսի 14-ին և 17-ին երկու հեռագիր էր ուղարկել Լեփսիուսին՝ խնդրելով հնարավորինս անել ամեն բան՝ աղետը կանխելու համար: Այդ հեռագրերը Լեփսիուսը հանձնել էր արտաքին գործերի նախարար Յագովին, և դրանց հիման վրա Ցիմերմանը հունիսի 18-ին Վանգենհայմին էր ուղարկել հետևյալ գրությունը. «Հայ-գերմանական ընկերությունը լուր է ստացել, որ քսան հնչակյան կախաղան են բարձրացվել, և որ նույնը սպառնում է Անգորա (Անկարա – Մ. Հ.) ուղարկված դաշնակցականներին, ի թիվս որոնց հայերի ականավոր ղեկավարներից Ակնունուն, Ջարդարյանին և ուրիշների: Եթե այդ լուրը ստույգ է, ուրեմն երկյուղալի է, որ մինչև օրս օրինապահ հայերը կմղվեն Եռյակ համաձայնության բանակը և հայերի դժգոհությունը կարտահայտվի ըմբոստություններով և մահափորձերով ընդդեմ իշխանությունների: Հանձնարարում եմ զգուշացնել Բ. Դոանը՝ հրաժարվելու չնտածված քայլերից, ու եթե դաշնակցականների համար մահավճիռ ընդունվի, ջանալ ջնջել տալ այն»: Այդ հեռագրի պատասխանը Վանգենհայմը ուղարկեց հուլիսի 16-ին: Նա հայտնում էր, որ չնայած իրենց հորդորներին՝ Բ. Դոաը շարունակում էր տեղահանել հայերին և բնակեցնել անմարդաբնակ վայրերում՝ դատապարտելով նրանց ոչնչացման: Իրենք անգոր էին դրա առաջն առնելու: Հետևաբար այդ հանցագործությունների տնտեսական և քաղաքական հետևանքների պատասխանատվությունը դեսպանի կարծիքով իրենք պետք է թողնեին Բ. Դոան վրա: Տե՛ս **Լեռնեան Ռ.**, Մեծ աղետի օրերուն // «Հայրենիք», 1928, թիվ 5, էջ 119:

Հունիսի 22-ի տեղեկագրում, որն ավելի ընդարձակ էր, ներկայացնելով հայ ժողովրդի՝ արդեն տեղահանված հատվածների ողբերգական դրությունը և միանշանակորեն հերքելով այդ միջոցառման ռազմավարական անհրաժեշտությունը «վկայակոչող» թուրքական պաշտոնական տեսակետները, Լեփսիուսը հայտնում էր, որ թուրքական կառավարությունը, պատերազմական իրադրությունն օգտագործելով, փաստացիորեն ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդի զանգվածային բնաջնջմանը, և որ տեղահանվածների թիվն արդեն հասել էր շուրջ 200.000-ի: «Ինչպես արդեն տեղեկացրել եմ իմ հունիսի 18-ի գրության մեջ, խոսքը վերաբերում է ոչ թե առանձին ընտանիքների վերաբնակեցմանը, այլ Անատոլիայի շրջանների և Կիլիկիայի հայ բնակչության մեծ խմբերի զանգվածային աքսորմանը տարբեր տարածքներ, հատկապես Միջագետք: Այդ միջոցառումները չեն կարող ռազմավարական պատճառներով արդարացվել..., քանի որ խնդիրը մեծ մասամբ վերաբերում է այն շրջաններին, որոնք գտնվում են Անատոլիայի խորքում՝ ռազմական գործողությունների գոտուց հեռու:... Ակնհայտորեն փորձ է կատարվում, պատերազմի ընձեռած իրավունքների ներքո քողարկվելով և օգտագործելով մուսուլմանների՝ սրբազան պատերազմի միջոցով բորբոքած կրքերը, մեծապես կրճատել կայսրության քրիստոնյա բնակչությանը և դեպի աննպաստ ու կլիմայապես ոչ անվտանգ սահմանամերձ տարածքները բռնի տեղահանման միջոցով կորստյան դատապարտել նրան»¹:

Երիտթուրքերի հետին նպատակների բացահայտման հետ մեկտեղ՝ Լեփսիուսը գերմանական կառավարությանը վճռական միջամտության դրդելու նպատակով անհրաժեշտ էր համարում պարզաբանել այն վտանգավոր հետևանքները, որ ունենալու էին այդ ռճրագործությունները Գերմանիայի համար: Հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, նշում էր նա, բխում էր Անտանտի շահերից, քանի որ հայ ազգային շրջաններում բորբոքվելու էր ատելությունը թուրքերի հանդեպ: Մյուս կողմից այն խոչընդոտելու էր նաև Թուրքիայի տնտեսական զարգացման միջոցով այդ երկրի վրա Գերմանիայի ազդեցության ամրապնդումը, քանի որ Թուրքիայի տնտեսությունը հիմնականում գտնվում էր «հայերի ուսերի վրա»: Բացի այդ, հայերի բնաջնջման իրողությունը թշնամի երկրներում կօգտագործվեր որպես զենք Գերմանիայի դեմ և միաժամանակ մեծ վրդովմունք կհարուցեր գերմանական ավետարանական եկեղեցական շրջաններում. հանգամանք, որ գերմանական կառավարությունը չէր կարող անտեսել: Եվ վերջապես՝ Թուրքիայում, որտեղ «կառավարությունը գործում է ահաբեկչական սկզբունքներով», անհնար էր, որ բնաջնջման քաղաքականությունը ահաբեկչության չնդեր նաև հալածվողներին: Իսկ եթե հաշվի առնվեր այն հանգամանքը, որ թուրքական կառավարության

¹ St' u Johannes Lepsius an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086):

դեմ կար «ուժեղ և վտանգավոր» ընդդիմություն, որպիսին Անտանտի հետ շահերի ընդհանրություն ունեցող լիբերալների միությունն էր, ապա, ինչպես նշում էր Լեփսիուսը, Գերմանիայի շահերը պահանջում էին բացառել այդ ընդդիմության հետ Թուրքիայի ներքին քաղաքականության հանդեպ նախկինում չեզոք դիրք որդեգրած հայերի միավորումը, որ կարող էր տեղի ունենալ հայ ժողովրդի բնաջնջման երիտթուրքերի քաղաքականության հետևանքով¹: Անդրադառնալով 120 դաշնակցականների ձերբակալությանն ու նրանց սպառնացող մահապատժին Լեփսիուսը նշում էր, որ դրա պատճառով «ռուսահայության ահաբեկչական տարրերը Թուրքիայում գործելու ազատություն էին ստանում»²: Նա ընդգծում էր նաև, որ չեզոք հայերի կոմիտեները թեև դիմել էին ամերիկյան, բուլղարական և հունական կառավարություններին՝ իրենց օգնելու խնդրանքով, բայց նրանք միաձայն պատասխանել էին, որ միայն գերմանական կառավարությունն էր ի վիճակի կանխելու չարիքը, քանի որ միայն նա ազդեցություն ուներ թուրքական կառավարության վրա և հետևաբար Թուրքիայի հետ հավասար պատասխանատվություն էր կրում այդ երկրի ներսում տիրող վիճակի համար³:

Ուշագրավ է, որ գրեթե նույն ժամանակ Լեփսիուսը հեռագիր ստացավ Սոֆիայի իր դաշնակցական ընկերներից, որտեղ նշվում էր. «Ձեր ներկայությունն այստեղ անհրաժեշտ է»⁴: «Կը բաւեր լակոնական հեռագիր մը, ուղարկուած իրեն մեր կողմէն,– գրում է Լ. Նազարյանցն իր հուշերում,– որպէս զի այդ զարմանալի մարդը, առանց մենէ որևէ բացատրութիւն ուզելու, ոչ միայն անմիջապէս ելնէր ու գար Սոֆիա, այլ եւ պահանջէր գերման արտաքին գործոց նախարարութենէն, որ իրեն Թուրքիա մեկնելու հնարաւորութիւն տրուի»⁵: Ուղևորության թույլատվությունը անպայմանորեն ձեռք բերելու համար Լեփսիուսը այս անգամ ԱԳՆ-ին հայտնում էր նաև կովկասահայերի առաջնորդների հետ բանակցություններ վարելու իր պատրաստականությունը և վստահեցնում, որ իրեն կհաջողվեր համոզել վերջիններիս «իրենց շահերը առանձնացնել Ռուսաստանի շահերից», եթե թուրքական կառավարությունը ազատ արձակեր ձերբակալված 120 դաշնակցականներին և հրաժարվեր հայ ժողովրդին աքսորելու ու բնաջնջելու քաղաքականությունից⁶:

Նշենք, որ ՀՅԴ-ն երբեք ռուսամետ դիրքորոշում չէր ունեցել⁷, սակայն

¹ Sté u Johannes Lepsius an das Auswärtige Amt // [http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$AllDocs/1915-06-22-DE-001, PA-AA, R 14086):

² Sté u **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 2, S. 44:

³ Sté u նույն տեղում, էջ 41:

⁴ Sté u **Լեռնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», 1928, թիվ 8, էջ 107:

⁵ Sté u նույն տեղում:

⁶ Sté u Johannes Lepsius an den Legationsrat im Auswärtigen Amt Rosenberg // [http: www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$AllDocs/1915-06-22-DE-002, PA-AA, R 14086](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$AllDocs/1915-06-22-DE-002, PA-AA, R 14086):

⁷ ՀՅԴ-ի տեսաբան Միքայել Վարանդյանը գերմանական սոցիալ-դեմոկրատական „Die neue Zeit“ («Նոր ժամանակ») շաբաթաթերթում տպագրած իր հոդվածներից մեկում մեջբերում

վերջին մի քանի ամիսների ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից հայերի բռնաճնշումների հետևանքով կուսակցությունը սկսել էր թեքվել Ռուսաստանի կողմը: ԱԳՆ-ում մտավախություն կար, որ հայերի շարունակվող հալածանքների պատճառով այդ գործընթացը խորանալու էր և հանգեցնելու այն բանին, որ հեղափոխական ակտիվիստները մահափորձերի ու սպանությունների միջոցով փորձելու էին ապակայունացնել իրավիճակը Թուրքիայում¹: Այդ պատճառով նախարարությունը որոշեց բավարարել Լեփսիուսի ցանկությունը, և հունիսի 23-ին Յագովի հրահանգով Վանգենհայմը դիմեց թուրքական կառավարությանը: Հաջորդ օրը նեթ հունիսի 24-ին, ԱԳՆ-ին ուղղված պատասխան հեռագրում Վանգենհայմը հաղորդում էր, որ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը թեև չի կարող թույլատրել Լեփսիուսի ճամփորդությունը գավառներում, բայց դեմ չէ նրա այցելությանը Կ. Պոլիս²:

Ինչևէ, չնայած Բ. Դուրը Լեփսիուսին հատկացրեց Կ. Պոլիս ժամանելու թույլատվություն, բայց Վանգենհայմն անձամբ բացարձակապես շահագրգռված չէր այդ այցելությամբ և ջանում էր այն խափանել: Նա համոզված էր, որ Լեփսիուսի ժամանումը և հայերի ծանր վիճակին ծանոթանալը կարող էին իրենց մեծ անախորժություններ պատճառել և վնասել Գերմանիայի հետագա ավելի կարևոր շահերին: Բացի այդ, նա ուստպիս էր համարում Թուրքիայի բռնություններից հրաժարվել պարտադրելու միջոցով ռուսահայերին իրենց կողմը գրավելու Լեփսիուսի տեսակետը: Նա չէր հավատում նաև, որ Լեփսիուսին կհաջողվեր հանդարտեցնել տեղի հայերին, քանի որ թուրքական կառավարությունը հաստատակամ էր իր քաղաքականության մեջ: Ուստի նա նախարարությանը խորհուրդ էր տալիս տարհամոզել Լեփսիուսին³:

Դեսպանի նախազգուշացումները, սակայն, իրենց նպատակին չհասան, քանի որ ոչ ոք չէր կարող համոզել Լեփսիուսին փոխել իր մտադրությունը: «Լեփսիուսը մեկնում է երկուշաբթի օրը և 10-14 օրից կլինի այդտեղ, – տեղեկացնում էր Ա. Ցիմերմանը հուլիսի 4-ին դեսպանին ուղարկված հեռագրում: – Քանի որ նա ձեռնարկել է բոլոր պատրաստություններն ու պայմանավորվածությունները, նրան ետ պահելու փորձը հաջողություն չունեցավ:

էր Ֆրիդրիխ Էնգելսի խոսքերը, որ «միայն ռուսական բռնակալության տապալումով կբացվեին Թուրքաց Հայաստանի վերջնական ազատության դռները»: Տե՛ս **Hayruni A. und Hosfeld R.**, նշվ. աշխ., էջ 229:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-24-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-24-DE-001), PA-AA, R 14086: Հմմտ. **Լեռնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 107:

* 1915 թ. ամռանը Լեփսիուսի Կ. Պոլիս ուղևորության նկարագրությունը տրված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում:

³ Տե՛ս Der Botschafter in Konstantinopel (Wangenheim) an das Auswärtige Amt // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-07-02-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-07-02-DE-001), PA-AA, R 14086:

Նա այսուամենայնիվ խոստացավ ժամանելուն պես ներկայանալ կայսերական դեսպանություն և խստորեն հետևել նրա ցուցումներին»¹:

Լեփսիուսը նախ այցելեց Բագել և Ժնև՝ հայերի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով իր մտադրության մասին², այնուհետև՝ Յյուրիխ, որտեղ հանդիպում ունեցավ ՀՅԴ-ի ռուսական թևի ղեկավար գործիչներից Սիմոն Չավարյանի³ հետ: Հուլիսի 12-ին Մարտին Ռադեի նուղոված նամակում նա այդ հանդիպման կապակցությամբ հետևյալն էր գրում. «Նաև սրանք (ռուսահայերի առաջնորդները – Մ. Հ.) թուրքական իշխանությունը կգերադասեին ռուսականից, եթե թուրքերը հրաժարվեին քրիստոնյա ժողովուրդներին ճնշելու անմիտ փորձերից»⁴: Մի քանի օր Յյուրիխում մնալուց հետո Լեփսիուսը Վահագն Քրմոյանի հետ Բուխարեստով մեկնեց Սոֆիա⁵:

Բուխարեստում ու Սոֆիայում ձեռք բերած տեղեկություններին ծանոթանալուց հետո նրա համար պարզ դարձավ, որ «խոսքը հայ ժողովրդի ծրագրված զանգվածային բնաջնջման մասին էր»: «Մնում էր միայն հուսալքություն է Լեփսիուսը, – որ ինձ հասած տեղեկությունները կարող էին չափազանցված լինել, և որ գոնե կլինայեին Անատոլիայի արևմտյան և կենտրոնական վիլայեթների հայությանը»⁶:

Լեփսիուսը Կ. Պոլիս հասավ հուլիսի 24-ին: Թեև նրան արգելվել էր մեկնել գավառները, բայց նա չէր հուսահատվում: «Հենց որ Կ. Պոլիս հասնեմ, – ասել էր նա Նազարյանցին, – պիտի բաց չթողնեմ Վանգենհայմի օձիքը, մինչև որ ինձ համար հայկական նահանգները մեկնելու թույլատվություն չտա»⁷: Իսկ այն հարցին, թե չի վախենում արդյոք, որ թուրքերը, ակամա համաձայնելով իր ճամփորդությանը, կարող էին միջոցներ ձեռք առնել իրեն փորձանքի ենթարկելու համար, նա պատասխանել էր. «Բնա՛վ, բնա՛վ: Թուրքերը լավ գիտեն, թե ում հետ ինչպես պետք է վարվել: Բավական է, որ տեղյակ լինեին չափին այն պատասխանատվության, որին կենթարկվեին իրենց վարմունքի համար: Իսկ իմ վերաբերմամբ այդ չափը Թալեաթին հայտնի է»⁸:

Սակայն Լեփսիուսի հույսերը չարդարացան: Հակառակ Կ. Պոլսում⁹ նրա գործադրած բոլոր ջանքերին՝ թուրքական կառավարությունը հաստատ մնաց իր որոշմանը՝ թույլ չտալ նրան ոտք դնել ադետի վայր: Թուրք նախա-

¹ Der Unterstaatssekretär des Auswärtigen Amts (Zimmermann) an die Botschaft in Konstantinopel // [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-07-04-DE-001, PA-AA, BoKon 169](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-07-04-DE-001, PA-AA, BoKon 169).

² Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 254:

³ Տե՛ս **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 5, էջ 120:

⁴ Տե՛ս **Hayruni A. und Hosfeld R.**, նշվ. աշխ., էջ 230:

⁵ Տե՛ս **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 5, էջ 120:

⁶ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang des armenischen Volkes, S. VII:

⁷ Տե՛ս **Լեոնեան Ռ.**, նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 107-108:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 108:

⁹ Լեփսիուսի այցի ժամանակ Վանգենհայմը առողջական խնդիրների պատճառով Կ. Պոլսից բացակայում էր: Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius' armenische Verbindungen, S. 220:

րարներից մեկը, ցանկանալով արդարացնել այդ արգելքը, Լեփսիուսին ասել էր. «Մենք չենք կարող երաշխավորել Ձեր ապահովությունը:– Ես չեմ վախենում ձեր ավազակներից,– առարկել էր Լեփսիուսը:– Բայց մենք ենք վախենում,– պատասխանել էր թուրք պաշտոնյան»¹:

Իրականում Լեփսիուսն ինքը քաջ գիտակցում էր, թե ինչ դժվարություններ էին իրեն սպասվում Կ. Պոլսում: «Ես գիտեի,– գրում է նա,– որ իմ ժամանման օրվանից հայտնվելու էի ոստիկանության լրտեսների հսկողության տակ: Եթե չէի ուզում, որ ինձ հետ կապի մեջ գտնվող հայերի կյանքը վտանգվեր, ուրեմն պետք է շատ զգույշ լինեի:… Չնայած ես ազգությամբ գերմանացի էի, բայց ամենուր ինձ հետևում էին՝ մատնելու նպատակով: Այդուհանդերձ ինձ հաջողվեց իմ հանդիպումները հայերի հետ այնպես կազմակերպել, որ նրանք աննկատ մնացին լրտեսներից»²:

Կ. Պոլսում Լեփսիուսը մնաց երեք շաբաթ, և այդ ժամանակը նա օգտագործեց «բոլոր կողմերից հնարավորինս շատ տեղեկություններ ձեռք բերելու համար»³: Թեև գերմանական դեսպանությունում նրան հյուպատոսական տեղեկագրերին ծանոթանալու հնարավորություն չտրվեց, այսուամենայնիվ դեսպանատան աշխատակիցների բանավոր հաղորդումները բավական էին մինչ այդ ձեռք բերված տեղեկությունների ճշմարտացիությանը համոզվելու համար: «Դեսպանության աշխատակիցները,– գրում է Լեփսիուսը,– որոնք չէին թաքցնում իրենց սարսափը, հաստատեցին արքայի բնույթի մասին Սոֆիայում առաջ եկած իմ կարծիքը»⁴: Հայկական սարսափների մասին նա բավականաչափ տեղեկություններ ստացավ նաև օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչներից, երկրի ներսում մասնաճյուղեր ունեցող կազմակերպություններից, ամերիկյան Bible Haus-ից, ցանկացած եվրոպացուց ու ամերիկացուց, որոնք եղել էին այդ վայրերում, ինչպես նաև հայ կաթոլիկ Մխիթարյաններից, հռոմեական կաթոլիկ օրդենի ներկայացուցիչներից⁵: Մեծ ծառայություն մատուցեց նաև Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուն, որը, շրջանցելով իր պաշտոնական իրավունքները, թույլ տվեց Լեփսիուսին աչքի անցկացնել հյուպատոսական տեղեկագրերը և ձևացնում էր, թե չի տեսնում, «երբ նա գրառումներ էր կատարում փաստաթղթերից»⁶: Լեփսիուսը կապեր հաստատեց նաև Կ. Պոլսում բնակվող հայերի, այդ թվում և Կենտրոնական վարժարանի տեսուչ Աստվածատուր Խաչատրյանի հետ, որը կազմակերպեց Հայոց Ջավեն պատրիարքի հետ նրա հանդիպումը: Ինչպես պատրիարքն է գրում իր հուշերում, հանդիպումը անցավ ջերմ ու աշխույժ

¹ Լեռնեան Ռ., նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 108:

² Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, S. 23:

³ Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. X:

⁴ Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, S. 23.

⁵ Տե՛ս Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes, S. X:

⁶ Տե՛ս Hayruni A., Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 3, S. 42:

մթնոլորտում. «Դր. Լեփսիուսը ճիշտ ժամանակին եկավ պատրիարքարան: Երկուսս էլ ընկճված էինք՝ ես, որովհետև անգոր էի իմ ժողովրդին վրա հասած անասելի աղետը կանխելու համար, և դր. Լեփսիուսը, որովհետև իր առաքելությունը ձախողվել էր: Ես հնարավորինս մանրամասն պատմեցի նրան երկրի ներսում հայերի աղետալի վիճակի մասին, տեղեկացրի նաև թուրք նախարարներին և գերմանական դեսպանին ուղարկած իմ խնդրագրերի մասին: Դեսպանը վստահեցնում էր, որ «հայի մեկ մատն անգամ չպիտի արյունոտվի», մինչդեռ այժմ մահվան է դատապարտված ամբողջ ժողովուրդը: Լեփսիուսն էլ ինձ պատմեց թուրք նախարարներին և դեսպան Վանգենհայմին իր դիմումների մասին և ավելացրեց, որ այժմ պիտի հուսակտուր վերադառնար: Այդ մեծ մարդասերը, հեկեկալով, արցունքներն աչքերին, ինձ ասաց, որ «թող Աստված մեզ օգնական լինի», և հրաժեշտ տվեց»¹:

Զավեն պատրիարքը նույնպես Լեփսիուսին տրամադրեց բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք ևս ընդգրկվեցին նրա «Տեղեկագիր հայ ժողովրդի դրության մասին Թուրքիայում» („Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei“) (1916) աշխատության մեջ²:

Կապիտան Հումանի միջամտությամբ Լեփսիուսին³ հաջողվեց օգոստոսի 10-ին հանդիպել նաև Էնվեր փաշայի հետ⁴: Մեկժամյա զրույցի ընթացքում նա գործադրեց իր բոլոր հնարավորությունները բնաջնջվող ժողովրդին փրկելու համար⁵: Սակայն նրա վրա մարդկայնորեն ներգործելու Լեփսիուսի բոլոր ջանքերն ապարդյուն էին: Էնվերն իր բացատրություններով նրան պարզորոշ հասկացրեց, որ երիտթուրքական կառավարության հայկական քաղաքականությունը խարսխվում էր «Հայկական հարցը համաշխարհային պատերազմում մեկընդմիջտ լուծելու» անխախտ որոշման վրա⁶:

Իր առաքելությունը համարելով ձախողված՝ Լեփսիուսը փորձեց փրկել մահվան ճիրաններում հայտնված հայ ժողովրդի զավակներից գոնե մեկին՝ բեռլինաբնակ հայ բժիշկ և փիլիսոփա, ԳՀԸ-ի հիմնադիր անդամ դր. Հայրանյանին, որը պատերազմի բռնկումից քիչ առաջ մեկնել էր Թուրքիա՝ հայրենի Սվազ գավառի Տիվրիկ գյուղը՝ իր ծնողներին տեսնելու: Հայրանյանը պետք է վերադառնար Բեռլին, երբ բռնկվեց պատերազմը, որի պատճառով նա մնաց Թուրքիայում և զորակոչվեց որպես ռազմական բժիշկ: Կարճ ժա-

¹ Հղումը ըստ՝ **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 4 // Armenisch-Deutsche Korrespondenz, Nr. 161, Jg. 2013/Heft 4, S. 43:

² Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius' armenische Verbindungen, S. 223:

³ 1915 թ. օգոստոսի սկզբին Կ. Պոլսից Լեփսիուսը իր կնոջը՝ Ալիսե Լեփսիուսին, գրում էր. «Թուքերով հնարավոր չէ նկարագրել, թե ինչ է կատարվել և դեռ կատարվում է: Ժողովրդի կատարյալ բնաջնջումը նպատակ է, և ամեն ինչ տեղի է ունենում պատերազմի քողի տակ: Առայժմ էլ ոչինչ չեմ կարող ասել»: Տե՛ս **Schaede S., Hofseld R.** (Hg.), նշվ. աշխ., էջ 25:

⁴ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang des armenischen Volkes, S. XII:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ XII-XVII:

⁶ Տե՛ս **Hayruni A. und Hofseld R.**, նշվ. աշխ., էջ 229:

մանակ անց, սակայն, ի թիվս այլ բժիշկների՝ Սվազի վալիի կողմից նա ձերբակալվեց ու արքայազնի Գերմանիայի Գերմանիա: «Ես երաշխավորեցի,– գրում է Լեփսիուսը,– որ իմ ընկերն ընդունակ չէ անխտեմ արարքների, և որ նա ոչ մի դեպքում չի չարաշահի իր ազատումը»¹:

Էնվեր փաշան վստահեցնում էր, որ իր համար հաճելի կլինեին կատարել Լեփսիուսի ցանկությունը, բայց նախ Սվազի վալիից պիտի ճշտեր, թե ինչ մեղադրանք էր նրան ներկայացված: «Ինչպես մյուս բժիշկներին, այնպես էլ Հայրանյանին ոչ մի մեղադրանք չի ներկայացվել, բացի հայ լինելու մեղադրանքից»²,– հնչեց Լեփսիուսի պատասխանը: Էնվեր փաշան մեկ անգամ ևս վստահեցրեց, որ Հայրանյանի դեմ ծանրակշիռ փաստարկների բացակայության դեպքում ինքը միջոցներ ձեռք կառնեի նրա վերադարձի համար:

Էնվերի «սիրալիր» վերաբերմունքը հույս էր ներշնչել Լեփսիուսին, որ իր ընկերը կփրկվի: Բայց Գերմանիա վերադառնալուց հետո նա տեղեկացավ, որ Հայրանյանը բանտում սպանվել էր³:

Ինչևէ, Կ. Պոլսում երեք շաբաթ մնալուց հետո Լեփսիուսը վերադարձավ ճանապարհին կանգ առնելով Սոֆիայում: Այստեղ նրան դիմավորեց Լ. Նազարյանցը, և կայարանից հյուրանոց գնալու ճանապարհին նրանց միջև տեղի ունեցավ շատ հետաքրքիր մի զրույց, որի մասին Նազարյանցը հետևյալն է գրում. «Տեղում իրականությանը բախվելուց հետո,– ասաց ինձ Լեփսիուսը,– ես եկա այն համոզման, որ հայերի կացության հետ կապված խնդիրները կարելի է լուծել միայն հեղափոխական միջոցներով»: -Ու անուշ նայուածքը սեւեռեց դեմքիս՝ տեսնելու համար, թե ինչ տպավորություն գործեց վրաս: Չարմացած իրեն կը նայեի. առհասարակ կը սիրեր կատակել. Ու այժմ ես կը դժուարանայի ըմբռնել՝ լուրջ բա՞ն մըն էր իր ասածը, թե սովորական կատակ միայն: «Այո,– շարունակեց,– ձեր դատը ինձ հեղափոխական դարձրեց, ու հիմա մենք, կարելի է ասել, «ընկերներ» ենք»: -Ու զուարթորեն քրքջաց: «Պատմեմ, թե ինչպես այդ եղավ: Ինձ նյութեր էին պետք, և ես կարողացա բավական մեծ քանակությամբ տեղեկագրեր և փաստաթղթեր ձեռք բերել: Շատ լավ: Բայց ինչպե՞ս պիտի այդ ամենը դուրս հանեի Թուրքիայից, հսկողություն, գրաքննություն, հազար ու մի արգելք: Այստեղ էր ահա, որ երևան եկավ հեղափոխականների հետ բարեկամ լինելու օգուտը: Հաճախ էի լսել, թե ինչպես էին տարբեր եղանակներով մի տեղից մյուսը արգելված առարկաներ փոխադրում: Որոշեցի հետևել նրանց օրինակին ու կատարյալ հաջողություն ունեցա»: -Իսկ եթե բռնուէի՞ք: «Դա էլ կլինեի իմ հեղափոխա-

¹ Տե՛ս **Lepsius J.**, Der Todesgang des armenischen Volkes, S. XVII-XVIII:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

կան մկրտությունը, որից հետո մնում էր միայն պաշտոնապես հարել որևէ հայ հեղափոխական կուսակցության»¹:

Լեփսիուսը Սոֆիայում անցկացրեց մոտ երկու շաբաթ, որտեղ ուսումնասիրում էր ՀՅԴ-ի արխիվը՝ քաղելով իրեն պետք եղած տեղեկությունները: Այս աշխատանքին նա նվիրում էր օրական 7-8 ժամ: Քանի որ Լ. Նազարյանը զբաղված էր «Հայաստան» թերթի խմբագրությամբ և շատ քիչ ժամանակ կարող էր տրամադրել ուրիշ գործերի, թարգմանչի դերը կատարում էր Տիգրան Խաչիկյանը (Արզուման): Բայց որովհետև նա վարժ չէր տիրապետում գերմաներենին, ուստի հայերեն գրությունների բովանդակությունը թելադրում էր ֆրանսերենով, իսկ Լեփսիուսը գրի էր առնում գերմաներենով²:

Մեպտեմբերի 18-ին վերադառնալով Բեռլին՝ Լեփսիուսը ներկայացավ ԱԳՆ, որտեղ Գերմանիայի կողմից թուրքական կառավարության վրա ներգործելու և նրա «սանձերը քաշելու» նրա պահանջը մերժվեց, քանի որ գերմանական կառավարությունը չէր կարող հրաժարվել Թուրքիայի հետ իր դաշինքից: «Ի՞նչ կարող ենք անել, – հակադարձում էր նրան Ցիմերմանը: – Մեր դաշինքը Թուրքիայի հետ կանգնած է Թալեաթի, Էնվերի և Խալիլի վեց աչքի առաջ: Եթե երեքը մեզ չեն լսում, մնում է, որ մենք հրաժարվենք այդ դաշինքից, իսկ դա անել մենք չենք կարող»³:

Լեփսիուսին այլ բան չէր մնում, քան հասարակությանը իրազեկել հայ ժողովրդին բնաջնջելու թուրքական կառավարության ծրագրած քաղաքականության մասին և փորձել դրա միջոցով ճնշում գործադրել իր երկրի կառավարության վրա, որպեսզի նա ի վերջո կանխեր աղետը և ձեռնարկեր դեռ կենդանի մնացած աքսորյալ հայեր փրկության գործը:

Грануш Саакян – Усилия Иоганнеса Лепсиуса, приложенные для прекращения Геноцида армян в июле-августе 1915 г.

Ознакомившись с содержанием телеграммы, направленной немецким послом в Константинополе Вангенгаймом в Министерство иностранных дел Германии 31 мая 1915 г., д-р Лепсиус решил лично отправиться в Турцию, чтобы на месте узнать о происходящих там событиях и дать ход своим заявлениям в правительство Германии с просьбой о помощи притесняемым армянам. Лепсиус прибыл в Константинополь 24 июля, пробыл там три недели и использовал это время для получения “как можно больше сведений со всех сторон”. В середине сентября вернувшись в Берлин, он отправился в Министерство иностранных дел Германии, которое отклонило его требование о вмешательстве в пользу армян и воздействии на турецкое правительство. После этого он был вынужден, информируя общественность о спланированной политике турецкого правительства по истреблению армян, оказать давление на немецкое правительство, для того чтобы оно в конце концов вмешалось и прекратило зло.

¹ Տե՛ս Լեոնտան Ռ., նշվ. աշխ. // «Հայրենիք», թիվ 8, էջ 108:

² Տե՛ս նույն տեղում, էջ 108-109:

³ Տե՛ս **Hayruni A.**, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 4, S. 43-44:

Hranush Sahakyan – *The Efforts Taken by Johannes Lepsius to in order to Prevent the Armenian Genocide in July-August 1915*

After getting acquainted with the content of the telegram sent by German Ambassador to Constantinople Wangenheim to the Ministry of Foreign Affairs of Germany on May 31, 1915, Dr. J. Lepsius decided to personally travel to Turkey to make sure that he was aware of the events taking place there and thus to make his applications to the German government favorable for the persecuted Armenians. Lepsius arrived in Constantinople on July 24, where he spent three weeks, and used that period to “get as much information as possible from all sides”. Returning to Berlin in mid-September, he went to the Ministry of Foreign Affairs, where his demand for Germany’s influence on the Turkish government in favor of Armenians was denied. After that, he had to put pressure on the German government to intervene in order to prevent the evil by informing the public about the Turkish government’s planned policy of annihilating the Armenian people.

Ներկայացվել է 30.10.2018

Գրախոսվել է 15.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019